լոցս, որ այսօր ծանրագին հիւանդութեամբ անկեալ թաւալիմք ի վերայ երեսաց երկրի, կամ իբրև զցորեան հնձեալ և այգի կթեալ և ճուռքն թողեալ, ահա այն իսկ տեսանի հափշտակեալ այլևայլ ձեռօք, որպէս գերամեծար տէրութեանդ և յայտնի է։ Այսուհետև թողից ազգելն և շատացայց, զոր ինչ ասացի։

Նախասահմանիչն ամենայնի և ամենեցուն ի ժամուն, յորում ծնայ ես ի մօրէ, գրեաց զանուն իմ ի դպրութիւնս գործողաց և ոչ գրողաց, բայց վա՜յ է ինձ, որ ոչ ունիմ զժամանակս գործածելոյ, առթեալ և վաղարկեալ ի ձեռն օրհնեալ ազգին իմոյ։

Արշակ փոքրագոյ ծառայն ձեր շնորհակալութիւնս ձօնէ տէրութեանդ վասն հայրագոյթ սիրով յիշելոյն ձեր զնա, նաև խոնհարաբար ողջոյն առաքէ և հանդերձ հարբ զողջկեցութիւն անձինդ ի տեառնէ ժամ։ Իսկ զՎաղարշակ եղբայր նորին, զորմէ լուեալ ես, ոչ է Վաղարշակ, այլ Յովսէփ յորջորջի, ընդ մարբ և ընդ երկու քեռ ի յողորմելի Ջուղայ տառապին ի ներ հարկապահանջութեան[25], եթէ ես ոչ էի յամեցեալ աստ ակնկալութեամբ ընկալնուլ զպատասխան ի ձէնջ, ի վաղուց հետէ գնացեալ էի ի յօգնութիւնս նոցա և ազատեալ ի վշտաց անտի իւրեանց, և բերել աստ ի ներքոյ յանդորր տէրութիւնս այսմիկ, և թէ նամակ ձեր կանուխ ժամանեալ իցէր, և կամ այլ ոք ոչ իցէր այնքան վաղարկեալ ի հասուցանելն ձեզ զթուղթ մեր, կերպիւ իւիք փրկութիւն լինէր նոցա կամ ելանէի աստի և գնայի ի Ջուղայ և անտի շուեալ իմ նօքօք դիմէի ի Յաշդարխան, և կամ այլ կողմն աշխարհիս, ուր ի խաղաղութեան և յանդորրութեան լիցի, ապա թէ յայնժամ ոչ լինէր մեզ այսքան զզուացուցիչ աշխատանք, նաև ոչ այսքան ցաւ և տրտմութիւն, յերբ լսեմք զկացութենէ նոցա, և զերկիրն այն, որ մերձ է լինիլ անմարդաբնակ, որոյ բնակիչքն գիշերապախ ելեալ անտի թափառին յամենայն տեղիս։

Այլև մխիթարութիւն իմն տաս մեզ ի հասարակութեան նամակիդ, որ առ մերազնեայս աստ ի Հնդիկս, յաղագս ծանօթ լինելոյն ձեր ընդ իշխանին Կիլանայ՝ ասելով եթէ նա պայազատեսցէ ի տեղի եղբօր իւրում Աղա Մահմատ խան Ղաջար բռնաւորին ի Սպահան, այցելութիւն ինչ առնելոց է անդ բնակեալ Հայոց ազգին։

Դարձեալ եթէ Նաբուգոդոնոսոր յարիցէ և Բաբիլոն կրկին նորոգիցի, Ջուղայ ևս կարելի լիցի նորոգիլ։ Բայց զմնացուորդ ժողովուրդ շինին այնմիկ, որք աստ և անդ են, Աստուած հաստատ պահեսցէ զնոսա, որք միշտ արդեամբ օգնական և նպաստ լինին տէրութեանդ և առաւել աղայ Յովհաննէսն Գարաքեանն։

Նաև խնդրեմ, զի ըստ խօստմանքում անպակաս արասցես մեզ զթուղթ օրհնութեանդ, մանաւանդ ընդ լրօք նորոգ զարգացեալ և զինուք զարդարեալ ազգին ռուստաց։ Յաւելեալ մաղթեմ ի տէրութենէդ, զի արժանի համարեսցես յիշել զհոգևոր գառինդ ի սուրբ յաղօթս քո առ տէր, զի նա է, որ հանէ զնոսա ի բանտէ նեղութենէ, նաև վերստին ջեռացուցանէ զզօրութիւն ոգւոցս մերոց, քաջալերել զմեզ և զձեզ՝ երկայնամիտ լինիլ... ըստ բանին սրբոյն Յակոբայ. «Երկայնամիտ լերուք եղբարք իմ մինչև ի գալուստն տեառն, ահա մշակ երկայնամտեալ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչև առցէ զկանուխ և զանագանն»։ Եւ կամ թէ օրինակ առնուլ մեզ զպատառիչ ազնիւ գազանի երկայնամտութեամբ շարժումն ի գործ և յաղթանակութիւն իւր, որ մինչ տեսանէ զփիղն, որ մեծագոյն է, քան զամենայն կենդանիս, ի սղագոյն յերկիւղէ անտի, ագամբ իբրև զմտրակ յարկանէ և բախէ զկողս իւր, ապա թէ շահատակեալ յարձակի ի վերայ յորսոյն։

Խաչիկ Առաքելեանն առ տէր է փոխեալ, և զողջոյն օրհնութեանդ, որ առ ժողովրդոցս աստի, որոյ վասն նոքա ի դարձին խոնհարաբար շնորհակալ եղեն։ Յաւել յայսմանէ կամ և մնամ հլու հպատակ և պատրաստական յամենայն ծառայութիւնս ձեր, հանդերձ յարգական համբուրիւ աջոյ և հայցմամբ երկարութեան կենաց ի տեառնէ ընդ յամայր ամս առ ի պարծանս ազգիս։ Ամէն։